ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ-13-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավար Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու արտահերթ թիվ-13-րդ նիստի օրակարգը՝

1. Արևշատ համայնքում 2019թվականի ,, Տեղական Տուրքերի և վճարներ,, սահմանելու մասին.

2. Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակիցների. բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի .հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

3. Համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ,, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ" ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի ,, Տեղական տուրքերի և վճարների մասին.,, Հայաստանի հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների

Համայնքի ավագանին որոշում է

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնքի 2019թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը համաձայն 1-ին հավելվածի.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1
Արևշատ համայնքի ավագանու
20-ը դեկտեմբերի 2018թ.
թիվ 51-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ - 7500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի 'ա' ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի

թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6600դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6600 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում Առևտրի և ծառայությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7600դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10100 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից1500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին

գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10). համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ.

Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ՝

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվու՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականոցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ.

2) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2000 դրամ.

3) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ,

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 2 000 դրամ

իսկ համայնքում

4).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 25 դրամ /1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ /1քառ.մ/.

գ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 3 դրամ /1քառ.մ./:

5).Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները.

1. կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն -500 դրամ.

2. Ծննդօգնություն՝

2.1. թեթև միջամտություն-1.000 դրամ.

2.2. ծանր միջամտություն-5.000 դրամ.

3.արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի-100դրամ, խոշոր կենդանի-200դրամ, բացառությամբ <<Գյողատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.

4.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար-200դրամ.

5.ախտահանություն-1 քմ 200 դրամ.

6.միջատազերծում(դեզինսեկցիա)- 1 քմ 100 դրամ.

7.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)-1 քմ 200 դրամ.

8.արհեստական սերմնավորում -5.000 դրամ.

9.կենդանու հերձում՝ մանր կենդանի-1.000դրամ, խոշոր կենդանի -3.000դրամ.

10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի -1.000 դրամ, խոշոր կենդանի -2.000դրամ.

11. կենդանիներին ախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր կենդանի-1.000 դրամ, խոշոր կենդանի-2.000դրամ,

12.կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018թ.հուլիս ամիսը), մանր կենդանի-1.000 դրամ, խոշոր կենդանի -2.000դրամ:

6) Արևշատի մանկապարտեզիծառայություններից օգտվողների համար համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել ամիսը 6000 հազար դրամ :

Արևշատի երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել 7000հազար դրամ

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 52 Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով ,, նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2019թվականի Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակիցների, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 2.3.4 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Արևշատ համայնքի ավագանու 15.12.2017թվաականի թիվ- 40Ն որոշումը

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ**

Հավելված 2.

Արևշատ համայնքի ավագանու

2018թդեկտեմբերի 20-ի թիվ-52 Ն որոշման

ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12 /2019թ/

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2019Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		270000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	140000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքպետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	190000
Համայնքպետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	170000
Համայնքպետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	1	105000
Համայնքպետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	90000
Քաղաքացիական աշխատանք		
Գրադարանավար.և մշակույթի տան տնօրեն	1	73000
Տեխսպասարկման անձնակազմ		
Պահակ	1	88000
Հավաքարար	1	88000
Կատարացու/վարորդ	1	73000
Այգեպան	05	50000
Աղբատար ավտոմեք,վարորդ	1	73000

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

Հավելված 3.

Արևշատ համայնքի ավագանու

2018թվականի դեկտեմբերի 20-ի թիվ-52-Ն որոշման.

2018Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ 13

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (<< դրամ)*
Տնօրեն	1.0	160000
Դաստիարակ	0.56	72751
Դաստիարակ	0.56	77904
Դաստիարակ	0.56	77904
Դաստիարակ	0.56	77904
Երաժ. դաստիարակ	0.5	72751
Դաստիարակի օգնական	1.1	80026
Դաստիարակի օգնական	1.1	85695
Խոհարար,	1.0	72751
Տնտեսվար /օժանդակ բանվոր/	1.0	77904
դռնապահ/	0.5	50000
Պահակ	1.0	72751
Հաշվապահ	0.5	72800

Ա

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

Հավելված 4

Արևշատ համայնքի ավագանու

2018թվականի դեկտեմբերի 20-ի թիվ-52 -Ն որոշման.

2018Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ 14		
Երժշտական դպրոցի տնօրեն տնօրեն մասնագիտական	1.0 0.5	75000 36400
Ուսմասվար մասնագիտական քանոն	0.5 0.95	36400 69160
Դաշնամուր	1.5	109200
Դաշնամուր	1.45	109200
Շվի- դուդուկ	1.3	10140
Դաշնամուր	1.4	105300
Տեսություն /սոլֆեջո/	1.5	109200
Շվի	0.6	46800
Վոկալ	1.15	83700
Քամանչա	0.55	40040
Դհոլ	1.45	105560
Ջութակ	0.9	70200
Հաշվապահ	1.0	72800
Հավաքարար	1.0	72800

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 53Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով

Համայանքի ագանին որոշում է՝

Ելնելով անհրաժեշտությունից կատարել հետևյալ փոփոխությունները

1. Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել 926240 դրամ /հողի օրինականացման վճար/ և 20000 հազար դրամ աճուրդի մասնակցության վճար.նախատեսել ծախս 11.01.02.51. գործ. դասակ. 4891 հոդվածի վրա ավելացնել 946240 դրամ:

2. Վարչական բյուջեի եկամուտները պակասցնել 6500դրամ /տեղական տուրքի վճար ծխախոտի վաճառքի թույլտվություն/ և պակասեցնել ծախս 11.01.02.51 գործ. դասակ 4891 հոդվածից:

3. Ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացնել հողի օտարումից գումար 5646920 դրամ նախատեսել ծախս 11.01.02.52 գործ. դասակ 4891 հոդվածի վրա ավելացնել 5646920 դրամ:

ա/ 11.01.02.51 գործ. դասակ. 4891 հոդվածից պակասեցնել 27600 դրամ և 01.01.01.51 4241 հոդվածից պակասեցնել 22000 դրամ և ավելացնել 01.01.01.51 գործ. դասակ. 4232 հոդվածի վրաՀԾ ծրագրի համար:

բ/ 01.01.01.51 գործ.դասակ 4261 հոդվածից պակասեցնել 20000 դրամ. 4264 հոդվածից պակասեցնել100000 դրամ .4269 հոդվածից պակասեցնել 60000 դրամ և ավելացնել 01.01.01.51 գործ. դասակ 4111 հոդվածի վրա.

գ/ 06.03.01.51 գործ. դասակ 4213 հոդվածից պակասեցնել 43558 դրամ և ավելացնել 01.01.01.51 գործ. դասակ. 4111 հոդվածի վրա 17000 հազ. դրամ. 4212 հոդվածի վրա 26558 դրամ:

դ/ 10.07.01.54 գործ. դասակ. 4726 հոդվածից պակասեցնել 60000 հազար դրամ և ավելացնել 08.02.04.51 գործ. դասակ. 4239 հոդվածի վրա 60000 հազար դրամ

ե/ 11.01.02.51 գործ. դասակ. 4891 հոդվածից պակասեցնել 147000 դրամ և ավելացնել 08.01.01.51 գործ. դասակ. 4269 հոդվածի վրա.

զ/ 01.01.01.51 գործառ. դասակ. 4213 հոդվածից պակասեցնել 30000 դրամ և ավելացնել 09.05.01.51 գործ. դասակ 4212 հոդվածի վրա;

11.01.02.51 գործ. դասակ. 4891 հոդվածից պակասեցնել 720000 դրամ և ավելացնել 09.05.01.51 գործ. դասակ 4239 հոդվածի վրա:

Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել ծնողական վճարների մասով երաժշտական դպրոցին 800000 դրամ և ավելացնել 09.05.01.51 գործ. դասակ 4239 հոդվածի վրա;

Վարչական բյուջեի եկամուտները պակասեցնել մանկապարտեզի ծնողական վճարների մասով 99000 դրամ 09.01.01.51 գործ. դասակ 4239 հոդվածից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ